

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐԱՅԻՆ

Տարեկան գինը 10 բուրջի, կես տարվան 6 բուրջի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Թիֆլիսում. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առ շաբաթը):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիտով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոկոսն մաքրաբանում է գործ.—Ներքին Տն-
Ստիճակը. Արձագանքներ. Նամակ Խմբա-
գրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀնՈԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԱՆՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Բազուի հանրակրթական կուրսերի
բացումը:

ՏՈԿՈՍՆ ՄԱՔԱՍՈՒՄ ԵՒ ԳՈՐԾ

Մենք ուրախութեամբ տեղեկանում
ենք, որ Էջմիածինը իր մի քանի կալուած-
ների համար հրաւիրում է հմուտ կառա-
վարիչներ: Մարդի կալուածքի համար
արդէն հրաւիրված է մի անձն: Էջմիած-
նում սկսել են գիւղատնտեսական մի շարք
փորձեր անել մասնագետի ձեռքով. բա-
նակցութիւն է սկսված յանձնելու Գան-
ձասարի և Խօթայ վանքերը նոյնպէս մաս-
նագետի:

Մենք դիւրահաւատներից չենք և ամե-
նին չենք կարծում, թէ վաղվանից ար-
դէն ամեն բան նոր կիրաւորանք կը ստա-
նայ և բարեկարգութիւնը ու խելացի
տնտեսութիւնը մուտք կը գործեն Էջ-
միածնի կալուածների մէջ, տալով ան-
միջական արդիւնքներ:

Ոչ: Այլ հաւատար չունենք: Բայց մի
բան մեզ համար պարզ է, որ Էջմիածինը
ինքն էլ է զգացել, որ կալուածների
տնտեսութեան ներկայ վրձակը բոլորովին
անտեսելի է դարձել և նրան պէտք բա-
րեփոխել: Իսկ մինչև որ իրապէս այդ
տնտեսութիւնը կը բարեփոխվի, դեռ նա
կանցնի մի քանի երկունքներ և շրջաններ:
Նոր տնտեսութիւն հաստատելու հա-
մար անհրաժեշտ է երկու պայման՝ մա-
քառել հին տնտեսութեան կուսակցիցները
ու պաշտպանները դէմ և ընդունակ լի-
նել նոր տնտեսութիւնը կազմակերպելու
խելացի հիմունքների վրա:

Հին տնտեսութեան պաշտպանների մէջ,
բացի հնաւանդ պահպանողական անձնա-
կորութիւններից, կան և բազմաթիւ այն-
պիսի անձնաւորութիւններ, որոնք շահ
ունեն նախկին կարգերից: Էջմիածինը իր
մարտի և «պլանի» արդիւնքներով խորթ
մայր չէ մնացել Վաղարշապատի մէջ ապ-
րոհներից շատերի համար, որոնք կը ցան-
կանային անվերջ օգտվել իրանց հասոյթ-
ներից:

Բայց ժամանակը և հանգամանքները
պարզել են, որ պէտք է վերջ դնել ան-
կարգութեան և հաստատել նոր կարգ:

ՆԵՐՔԻՆ ՏՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

LXI

Վերջապէս Թիֆլիսի փաստաբաններն էլ
մտածեցին, որ իրանք որոշ պարտականու-
թիւններ ունեն դէպի իրաւաբանական օգնու-
թեան կարօտ ժողովուրդը:

Այս հոկտեմբեր ամսի 10-ից Թիֆլիսի նա-
հանգական դատարանի չէքում բացվեց Թիֆ-
լիսի շրջանային հաւատարմատարների և Նը-
րանց օգնականների խորհրդատու գրասենեակը
(Կօնսուլտացիա), որի նպատակն է, ինչպէս
ասված է կանոնադրութեան մէջ, «իրաւաբա-
նական օգնութիւն հասցնել ժողովուրդին»:

Այդ օգնութիւնը կայանում է նրանում, որ
ամեն օր (իսկ ամառը, այսինքն յուլիս և օ-
գոստոս ամիսներին, շաբաթ ոչ պակաս, քան
երկու օր) բացի անաստան (առ) օրերից, ա-
ռաւօտեան ժամի 10-ից մինչև 2-ը, հերթա-
պահ երկու երգուել հաւատարմատարներ
կամ մի երգուել հաւատարմատար ու մի օգ-
նական բերանացի կամ գրաւոր խորհուրդներ
են տալիս իրանց դիմողներին, խնդրագրեր
և ուրիշ թղթեր են կազմում նրանց համար,
և պատճառաբանված պատասխաններ են
պատրաստում առկարկված իրաւաբանական
հարցերին, կամ անմիջապէս, կամ եթէ հարցը
բարդ է կամ առաջարկված են քննելու բազ-
մաթիւ թղթեր) որոշ ժամանակից յետոյ, ոչ
աւելի քան մի շաբաթից յետոյ, եթէ պա-
հանջվում է բերանացի պատասխան, և ոչ
աւելի, քան երկու շաբաթից յետոյ, եթէ պա-
հանջվում է գրաւոր պատասխան:

Ամեն պատասխան տրվում է հերթապահ եր-
կու անդամների խորհրդակցութիւնից յետոյ,
իսկ բարդ հարցերին գրաւոր պատասխան
տալուց առաջ հերթապահ անդամներից մէկը
պատրաստում է պատասխանի ծրագիրը, որ
ենթարկվում է քննութեան կարգադրիչ մաս-
նաժողովի նիստում և վերջնականապէս խը-
բարվում է ժամանաժողովի անդամների մեծա-
մասնութեան կարծիքի համաձայն:

Չքաւորներից խորհուրդներ ու պատասխան-
ներ տալու և խնդրագրեր են ուրիշ թղթեր
կազմելու համար ոչինչ չեն առնում, իսկ ու-
նեւորներից առնում են բերանացի պատաս-
խանի համար, նայելով դիմողի կարողութեա-
նը և հարցի բարդութեանը, 50 կոպեկից

մինչև 25 բուրջի: Գրաւոր պատասխանի վար-
ձը թողնված է հերթապահ փաստաբանների
հայեցողութեանը: Որոշված վարձը յայտնվում
է դիմողին և եթէ նա համաձայն է, այն ժա-
մանակ նա վճարում է և ստանում ստացա-
կան, որի մէջ նշանակվում է, թէ որ օրը նա
կարող է ստանալ իր ուղած պատասխանը
կամ թուղթը: Չքաւորներից՝ չքաւորութեան
ձեւական ապացոյցներ չեն պահանջվում:

Ուրիշ տեղերից էլ կարելի է գրել խորհր-
դատու գրասենեակին հետեւեալ հասցեով.—
Тифлисъ, въ Консулѣтацію присяжныхъ по-
вѣренныхъ и ихъ помощниковъ въ зданіи
Тифлискаго Окружнаго Суда. Իրանց դիմող-
ները պէտք է գրեն հարցերը, բացատրեն գոր-
ծի հանգամանքները և ուղարկեն գործի հեռ-
կապ ունեցող զօկոււմէնների պատճէնները
և պատասխան նամակները (մարկա) պա-
տասխանի համար: Խորհրդատու գրասենեակը
նամակով յայտնում է այդպիսիներին վարձա-
տրութեան չափը և վարձատրութիւնը ստա-
նալուց յետոյ ուղարկում է պահանջած պա-
տասխանը: Հասարակ թղթերը պահվում են
մինչև 6 ամիս, իսկ իսկական զօկոււմէնները
ցպահանջ:

Գործը դեռ նոր է և օկղրում անհարթու-
թիւններ կարող են պատահել, բայց գործին
մօտ կանգնողների համար հէնց առաջին օրից
պարզվեց, որ այդ հաստատութիւնը մեռելածին
չէ, որ նա խոր արմատ է գցելու մեր մէջ և
արժանանալու է հասարակական բոլոր խաւերի
համակրութեան:

Չը նայելով որ դեռ միմիայն ուսուցիչ յայ-
տարարութիւններ են տարածված այդ հաս-
տատութեան մասին (այժմ տպվում են նաեւ
հայերէն ու վրացերէն յայտարարութիւններ),
չը նայելով, որ «կոնսուլտացիա» բառը անհաս-
կանալի է ժողովուրդին, այնուամենայնիւ հէնց
օկղրից ժողովուրդը իր բնազդով հասկացաւ,
որ իր անհնազան բարեկամներից մէկն է իրեւ-
րու այդ նոր հաստատութիւնը, և հէնց առա-
ջին օրից պարզ ցոյց տուեց իր վստահութիւնը
դէպի նա:

Վերջապէս մեր ժողովուրդը, առ այժմ գոնէ
Թիֆլիսում, ազատվեց դիմանաբուժ վըր-
տացող փողոցային փաստաբաններին՝ դիմելու
անհրաժեշտութիւնից: Վերջապէս կայ մի հաս-
տատութիւն, որից ձրի կամ էժան իրաւաբա-
նական օգնութիւն կարող է ստանալ արդարու-
թիւն փառող անօգնական ժողովուրդը:

Ժամանակը աւելի ևս սերտ կը դարձնի
փաստաբանների և ժողովուրդի առողջ պարաբ-
րութիւնները, և Թիֆլիսի փաստաբանների
խորհրդատու գրասենեակը, որ պատկանում է
նոյն տիպի հաստատութիւններին, ինչպէս ժո-
ղովրդական համալսարանը, էժանագին գրա-

դարանը և այլն, մի գեղեցիկ դարոց կը լինի
փաստաբանների ապագայ սերունդի համար և
մի սփոփանք ցաւերով ծանրաբեռնված չքա-
ւորների համար:

Մի դէպք, որին ես ականատես եղայ, որով
հետեւ իմ հերթապահութեան օրը տեղի ունե-
ցաւ, շատ լաւ բնորոշում է չքաւոր դասի վե-
րաբերմունքը դէպի նոր հաստատութիւնը:
Օրավարձով ապրող մի կին, որի չքաւորու-
թիւնը հաստատեց պատանձամբ ներկայ գտնվող
մի փաստաբան, չուզեց ձրի օգտվել գրասե-
նեակի օգնութիւնից, և, չը նայելով մեր որոշ-
ման՝ ոչինչ չը վերցնել նրանից, ստիպեց մեզ
ստանալ յօդուտ գրասենեակի իր փոքրիկ լու-
ման:

Դժուար էր աւելի լաւ նուիրագործել այդ
նոր հաստատութիւնը:

S. S.

ՆԱՍՏԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ

Պարիզ, հոկտեմբերի 20-ին

Ամենքին յայտնի է, թէ ինչ աննախանձելի
վիճակի մէջ են գտնվում հայկական անգին
հնութիւնները:

Ամենքը գիտեն, թէ ինչպէս մինչև այժմ
ոչնչացնում էին և ոչնչացնում են մեր պատ-
մութեան դարաւոր և թանկագին յիշատա-
կարանները:

Եւրոպական ազգերի մօտ երբէք մենք չենք
գտնի այդպիսի անխղճ պերտախառնութիւն դէ-
պի նախնիներից մնացած աւանդները, այլ
ընդհակառակը՝ նորնրից հնութիւնները ա-
մենապատուաւոր տղան են գրաւել նրանց
համար յատուկ թանգարաններ մէջ, իր կեն-
դանի վկաններ նոյն ազգերի անցեալ դարե-
րում գոյութեան: Այդ դարաւոր վկանները նը-
րանց ազգային հպարտութիւնը, պարճանքն են
կազմում:

Գիտնական հետազոտութիւններով զբաղող-
ներին ծանօթ է, թէ Պարիզի և թէ Բերլինի
ակադեմիաները հրատարակած են արդէն սե-
նական ազգերի յատուկ լեզուներով նոյնպէս
և կառնի և յոյն լեզուներով գտնված բոլոր
արձանագրութիւնները, մասնաւոր ժողովա-
ծուների (Corpus) մէջ ամփոփած. այնպէս որ
նոյն ազգերի պատմութեամբ զբաղող մէկը
կարող է առանց դժուարութեան իր աչքեւ
ունենալ նոյն ազգի յատուկ արձանագրու-
թիւնների ամբողջութիւնը: Իսկ մենք չունենք
մի այնպիսի ժողովածու: Ուստի՝ մեր ոյժերի
ներածին չափ պէտք է թէ բարոյապէս և թէ
նիւթապէս օգնենք նոյն ուղղութեամբ մի աչ-
խատութիւն պատրաստող անձին:

Այլ քան թանկ ունենալով մեր հնութիւնների
վիճակը, Պարիզի մի խումբ հայեր կամենում
են գոնէ ազատել կորստից այն, ինչ որ կա-
րելի է:

Ամենքին հասկանալի է այդ ձեռնարկու-
թեան կարեւորութիւնը և օգտակարութիւնը.
սակայն ամեն մէկն էլ գիտէ, թէ ինչ ծանր

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՎԳՈՒԻ ՀԱՆՐԱՎԿՐԹԱԿԱՆ ԿՈՒՐՍՆԵՐԻ ԱՅՏՈՒՄԸ

Գիրակի, հոկտեմբերի 21-ին, արական գիմնա-
զիայի դահլիճում տեղի ունեցաւ հանրակրթա-
կան կուրսերի հանդիսաւոր բացումը ներկա-
յութեամբ նահանգապետի, փոխնահանգապե-
տի, քաղաքապետի և խումբ բազմութեան:
Սովորական մաթեմատիկայի յետոյ՝ կուրսեր կազ-
մակերպող ժողովի պատուաւոր եւ պատասխա-
նատու նախագահ Պրեզիդենտը, արական
գիմնազիայի դիւրեկտորը, համառօտ կերպով
ժանօթարեց կուրսերի ծրագիրը և ծագման
պատմութեան հետ, որ արդէն յայտնի է ՎՇա-
կի՝ ընթերցողներին: (Տես ՎՇակ) № 135,
1901 թ.): Հանրակրթական կուրսերն ունեն
բաժանմունքներ Սեւ քաղաքում և Բալայա-
նիում: Դասախօսութեան ժամանակամիջոցը
սկսվում է հոկտեմբերի 15-ից և տևում է
մինչև մայիսի մէկը: Հաշուում է երկու կիսա-

մեակ՝ հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի
20-ը և յունվարի 7-ից մինչև մայիսի 1-ը:

Կուրսերի ունկնդիրները վճարում են մէկ
դասախօսութեան համար՝ 10 կոպեկ, կիսա-
մեակում՝ հինգ ասարկայի դասախօսութեան
ունկնդիր լինելու համար՝ 1 ր., հինգ ասար-
կայից աւելի դասախօսութիւնների համար—5
բուրջի, երկու կիսամեակում՝ 10 ր.: Դասա-
խօսութիւնները պէտք է ընթանան փորձերով
և մոզական լապտերների միջոցով ստացված
լուսանկարներով: Կուրսերում ունկնդիր կա-
րող են լինել երկու սեռի անձինք: Դասաւան-
դութեան համար նշանակված է 41 ասարկայ:
Դասախօսութիւնները քաղաքում ժամանակա-
ւորապէս տեղի կունենան գիմնազիայի առ-
դիտօրիայում, իսկ յետոյ Նիկոլայեան փողո-
ցում կառուցվող քաղաքային տան կից ժողո-
վրդական տանը, որ «Պուշկինեան» պիտի կոչ-
վի ի յիշատակ քանաստեղծի:

Պրեզիդենտից յետոյ ամբիօս բարձրա-
ցաւ կուրսերի նախաձեռնողներից մէկը՝ Ն.
Ալիբեկեան, որ կարգաց հանրակրթական կուր-
սերի նշանակութեան և նրա սկզբնական ծագ-
ման մասին:
Այդ, համեմատաբար, նոր շարժումը, որ

ձգտում է տարրացնել գիտութիւնը և մաս-
նաւոր դարձնել նրա արգասիքը ժողովրդի հա-
մար, սկիզբն է առել, պարտնի վկայութեամբ,
արեւմտեան Եւրոպայում: Թէ որ ազգին, կամ
որ երկրին է պատկանում այդ շարժման ա-
ռաջին իղէան—դրա մասին գտնադան կար-
ծիքներ են տիրում: Ոմն Մասնիկիօի տեսլով,
այդ շարժման առաջին իղէան պատկանում է
երեք Ֆրանսիացիների՝ Տօնա Ֆոլլէ, Բաուլ
Վիլիէ և Ժան Մօնիէ: Արանցից Բաուլ Վիլիէ
առաջին անգամ փողոցում ուսանողներից և
բանւորներից ժողով է կազմում մտքերի փո-
խանակութեան համար: Յետոյ այդ ուղղու-
թեամբ շարժումը համակարգ է գտնում հան-
րապետութեան անդամներից: Իսկ Կիման-
սօ, Ժէֆֆրուս և ուրիշ Ֆրանսիական հրա-
պարակաբաններ ժողովրդական համալսարան-
ների հոգեւոր հայր են համարում Դեգեու-
մաին, որը կազմակերպել է հասարակական
դասախօսութիւններ և երկրորդան գրոյցներ
բանւորների համար: Սակայն իղէալական այդ
նոր շարժումը սկսվել է միաժամանակ ինչպէս
Ֆրանսիայում, այնպէս և Գանիայում, Անգլ-
իայում, Հիւսիսային Ամերիկայում և Գեր-
մանիայում: Սկզբում կազմակերպվել են կի-

րականօրեայ ընթերցանութիւններ, ապա երե-
կոյեան կուրսեր և վերջապէս ժողովրդական
համալսարաններ, որոնք ներկայումս գոյու-
թիւն ունեն համարեա եւրոպական բոլոր պե-
տութիւնների մէջ, ժողովրդական կոչված այդ
համալսարաններից միանգամայն դուրս են
նետված պարագուէնքի այնպիսի առարկաներ,
որոնք վերաբերում են քաղաքական, սօցիա-
լական և կրօնական վարդապետութիւններին:
Այդտեղ աւանդվում է միմիայն գիտութիւն:
Բացի տեսականից՝ այդտեղ աւանդվում են
նաեւ գործնական առարկաներ. սովորեցնում
են՝ դերձակութիւն, կոչկալարութիւն, ձեռա-
գործ, երաժշտութիւն և այլն:
Արտասահմանում ժողովրդական համալսա-
րանների առաջնորդները միշտ լինել են իր-
նում, այնպէս որ տեղի սղութեան պատճառով
կարգացվում են և զուգընթաց կուրսեր:
Ունկնդիրների կօտինգները բազմաժանան է.
բանւորներ, արհեստաւորներ, տեխնիկներ,
գործակալատարներ, վաճառականներ, ուսուցիչ-
ներ, ուսուցչուհիներ և այլն:
Այդ նոր հոսանքը արտասահմանից անցնում
է Ռուսաստան: Մէկ մէկի ետեւից երեւան են
գալիս նոյնանման հիմնարկութիւններ Պետեր-

աշխատանքները եւ ներթափանցողութիւնները կարող է մի այդպիսի գործ:

Բարեբաղդաբար մենք ունենք մի այնպիսի մասնագէտ, պ. Կ. Յ. Բասմազեան, Պարթիզի համալսարանում ուսած, որը պատրաստ է ամեն տեսակ գրկանքներ կրել եւ աշխատել այդ գաղափարի իրագործման համար:

Նոյն գիտնականը, Վեհ. Կաթողիկոսի առաջարկութեամբ, արդէն մի անգամ աջող կերպով կատարած է մեր եւ իր բաղձանքը:

Մի փոքր գաղափար տալու համար կատարվելիք աշխատութեան, որին ձեռնարկել է պ. Բասմազեան, բաւական է յայտնել թէ՛ երկը պիտի կրէ Հայ դաւանանքը եւ պիտի պարունակէ մեր բոլոր չէն եւ աւեր յիշատակարանները—վանքերի, բերդերի եւ ազգային ամեն տեսակ հնութիւնների, գեղարուեստական ու մասնաւոր ճարտարապետական մնացորդների, հին արձանագործութիւնների եւ ձեռագրների—իսկ ատիպ պատկերները, հանդերձ մանրամասն տեղեկութիւններով, հնախօսական ու պատմական ծանօթութիւններով եւ արձանագործութիւնների ստույգ, անթերի հրատարակութեամբ:

Կատարվելիք ուսումնասիրութիւնները այն մասերը, որ կարող են երազանքներին էլ հետաքրքրել եւ մեր ազգի փառաւոր անցեալը հաստատել գիտնականների ազնիւ պ. Բասմազեան պիտի հրատարակէ Ֆրանսիայի լեզուով եւս, ինչպէս արդէն կատարած է նոյնը արանից առաջ:

Այժմ միայն ներթափանցողութիւնները պակասութիւնն ենք զգում այդ գործի շարունակութեան համար: Մեզ հարկաւոր է միայն հազար ռուբլի, որի մի փոքր մասը հաւաքված է մեր մէջ:

Նպատար խնդրում ենք ուղարկել մեր պ. գանձապահին, P. A. R. 36, rue de La Tour d'Auvergne. Mr. J. Iskender, rue

Ներթափանցողութիւնները եւ հաշիւները մանրամասնաբար կը հրատարակվին:

Թիշեալ խմբի կողմից՝ Տօքօ. Սըզբեան, Միւնստ Զերաք, Սուքրիա վարդապետ Պարոնեան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, հոկտեմբերի 23-ին

Յայտնում ենք մեր երախտագիտութիւնը պ. Պր. Չալխուչեանին, որ նա մեր թոյլ պարտաւանաշուքեան զօրեղ արտայայտիչը եղաւ եւ կարողացաւ մի առաջըլ արագան պարտաւոր կատարել զէպի մեծ բանաստեղծ Փամաթաթիպան Սակայն մենք, այդ գեղեցիկ գործին չը մասնակցողներս, չը պէտք է մեր խիղճը քննանք՝ կարծելով թէ, յիշուի, պ. Չալխուչեան կատարել է ամեն էփիտ անհատական կամ հասարակական պարտքը: Հիմա, երբ արդէն կանգնած է Փամաթաթիպայի արձանը, կարծում ենք, որ այդ վեճ գործին որ եւ է մի բանով չը մասնակցած համայնքները, շըրջանները եւ անհատները խզի խայթ, զգլում եւ զէպի մասնակցողները բարի նախանձ են զգում:

Այդ պատճառով մեր ձայնը միացնելով պ. Ալէքսանդր Աբէլեանի ձայնին, վստահանում ենք հրապարակով դիմել պ. Պ. Չալխուչեանին, որ նա յանձն առնէ իրագործելու իր ինքնատիւ Միջոցի՝ Նալբանդեանին հասարակական արձան կանգնեցնելու վերաբերմամբ: Գրանով պ. Չալխուչեան խթան կը լինի, որ հասարակութիւնը իր պարտքը, վերջապէս, կատարէ զէպի նշանաւոր բանաստեղծը եւ հրապարակաւոր է թէ միջոց կը տայ այն շրջաններին եւ անհատներին, որոնք յարգելի թէ անյարգելի պատճառներով չեն մասնակցել Փամաթաթիպայի արձանի կառուցման ծախսերին (ինչպէս, օրինակ, մենք), այս անգամ իրանց

բարբառ, Օղեսայում, Կիեւում, Թարկովում եւ Թիֆլիսում:

Բագուի նոր բացվող կուրսերը արտասահմանեան տիպի են յարմարեցրված՝ ընդարձակ եւ բազմատեսակ ծրագիր, վճարովի ունկնդրութիւն եւ դասախօսների վարձատրութիւն:

Կուրսերի հանդիսարանը բացան այդ օրը, երեկոյան 5 ժամին, տեղի ունեցաւ առաջին դասախօսութիւնը բուսայ գրականութիւնից, որ գրաւել էր 60-ի չափ երկու տեղի ունկնդիրները: Դասախօսութիւնները տեղի կունենան ամեն օր, երեկոյան 8 ժամից մինչեւ 10 ժամ, բացի կիրակի եւ օտն օրերից, երբ կը սկսվեն աւելի վաղ: Առ այժմ գրված ունկնդիրների թիւը հասնում է 100-ի, իսկ պատահական յաճախողների թիւը օրական միջին թիւով, 40—50 հոգու: Ամեն դասակարգից լինում են ունկնդիրներ՝ սկսած ինտելիգենցիայից մինչեւ բանուորներ: Մէկ երրորդ մասից աւելի լինում են օրիորդներ եւ տիկնիկներ, գլխաւորապէս՝ վարժուհիներ, տարրական եւ ընտանեկան կրթութիւն ստացածներ:

Բացվող այս հանրակրթական կուրսերի նախաձեռնութիւնը պատկանում է մի խումբ ինտելիգենցիաների, իսկապէս մի քանի հոգու,

պարտքը կատարելու, միայն ուղղելու, ուրիշն եւ խիղճը հանգստացնելու: Փամաթաթիպայի արձանի բացումը կրթական ազդեցութիւն է անում. ուստի մենք համոզված ենք, որ հասարակութիւնը կը լսէ պ. Պր. Չալխուչեանի ազնիւ ձայնը, արձագանք կը տայ նրա կոչին, եւ թերեւս աւելի հեշտ իրագործի կունենանք: Ունկնդրութիւնը կրթական նշանակութիւն:

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շամախի, հոկտեմբերի 23-ին

«Մշակի» 230 համարում Շամախուց գրված մի լուրի մէջ կարդացինք, թէ իբր այստեղ նոր քաղաքազուխ է ընտրված երիտասարդ իրաւաբան Սարգիս Շամախեանը:

Պարտք ենք համարում յայտնել յարգելի խմբագրութեանը, որ այստեղ ոչ մի քաղաքային կամ այլ ընտրութիւն տեղի չէ ունեցել եւ չարմատ ու անձնական հայրենիքով առաջնորդված լրատուի իշխած պ. Շամախեանը նորեւ ընտրված է եղել քաղաքային վարչութեան մէջ գրագրի պաշտօնով միայն:

Ահա այդ հանգամանքը կեղտոտ եւ լպիքը վրէժառութեան միջոց ընդունելով, մի կողմից պ. Շամախեանի եւ միւս կողմից «Մշակի» խմբագրութեան վրա (ըստ իր) արատ բերելու, յետին մտքով է միայն գրված յիշեալ անասութիւնը: Բայց որովհետեւ մինչեւ այն, նրա օնհանգի հեղինակը բացարձակ, կինոյաբար փողոցներում էր համեստ ու անօթխած պ. Շամախեանին իբր ծաղր քայքայելու զօրութեամբ եւ որովհետեւ մեզ յայտնի է, թէ ինչ ստոր ընտրութեան տեղ մարդ է եղել ձեռնմուտից, ուստի խորի զգուշանք արժանի լուրը շատ էլ չը թվաց մեզ:

Ստորագրութիւններ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Հինգշաբթի, հոկտեմբերի 25-ին, երեկոյան, Թիֆլիսի ազնուականների հողային բանկի շինութեան մէջ տեղի ունեցաւ Թիֆլիսի նահանգի ազնուականների ժողովը՝ խորհրդակցելու համար, թէ ինչպէս պէտք է գործածել այդ ազնուականութեան կրթական կարիքների համար բարձրագոյն նուերված 20,000 ռուբլին: Ժողովը ընտրեց մի մասնախումբ, որին եւ յանձնեց ընկալել այդ հարցը:

Երէկ, հոկտեմբերի 26-ին, առաւօտեան 10 ժամին, անանաբուժական վարչութեան շինութեան մէջ տեղի ունեցաւ կովկասեան նահանգական եւ շրջանային անասնաբույժների համաժողովի բացումը՝ ներքին գործերի միւնիստրութեան անասնաբուժական մասի կառավարիչ Բոմբերի նախագահութեամբ:

Երկրագործութեան եւ պետական կառուցման միւնիստրի կովկասեան իրազօր պ. Մեղվեղով հարորդեց կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդին, թէ երկրագործութեան միւնիստր թիւղ է առել, որ գինեգործների եւ հողագործների համաժողովները շարունակվին մինչեւ ղեկավարներ ամսի առաջին թւերը:

Նոյեմբերի 6-ին Թիֆլիսի նահանգական դատարանում նշանակված է այն գործը, որ ըսկովել է կաղզուանցի հարուստ պ. Զաքար

որոնց մէջ յղացել է այդ միտքը եւ ստանձնել նախապատրաստական հոգացողութիւնը: Այսօր ահա իրականանում է նպատակայարար միտքը եւ այդ մի քանի հոգին խմբած ունեն իրանց խորջը տանեակաւոր մասնագէտ ինտելիգենցիաներ, որոնք ամենայն պատրաստակամութեամբ ցանկանում են օգտակար լինել, կցել իրանց աշխատանքը այն ընդհանուր աշխատանքին, որի նպատակն է բարձրել ազգային գրութիւնը, նպաստել մեծամասնութեան մտաւոր եւ հոգեկան զարգացման, լրացուցիչ զեր խաղաղ ուսման եւ գիտութեան վերաբերմամբ նրանց համար, որոնք ունեն սովորելու ձգտում, սէր, բայց չունեն միջոց, չունեն հնարաւորութիւն—եւ այդ կատարվում է նաւթային աշխատանք, զիդեաների գերբազմապատում... Ո՞վ չէ պատրաստակար, դատաւիտեղի Բագու, ո՞վ չէ նկարագրել Բագուի տիրապետող մթնոլորտը, նրա սպանիչ հանգամանքները, անյարձեհարելի պայմանները: Եստ շատերը եւ ինչո՞ւ համար նրա համար, որ Բագուից դուրս զիդեալիստ, շատակալական գործիչ ճանաչվածները, ընկնելով Բագու, անգործունէութեան են դատարարվում, ամեն «սուրբ» բան ստացողութեան են տալիս եւ միմիայն զփող աշխատելու» ե-

Զամբօտանի գանգատով մեր թղթակից պ. Ա. Տէր-Ներսէսեանի դէմ: Ինչպէս լինում են ընթերցողները, պ. Ա. Տէր-Ներսէսեան «Մշակի» սնցեալ տարվայ 202 համարում նկարագրելով պ. Զամբօտանի եւ Կաղզուանի հասարակութեան մէջ տեղի ունեցած տարածայնութիւնը եկեղեցի շինելու հարցի վերաբերմամբ, մեղաւոր էր համարում այդ վէճում պ. Զամբօտանին: Պ. Զամբօտանեան, զրպարտութիւն համարելով այդ գանգատիլ է Թիֆլիսի նահանգական դատարանին: Այժմ նոյեմբերի 6-ին դատարանը վճռելու է մի հետաքրքրական հարց, արեօք ճիշտ է, որ պ. Զամբօտանեան կարել է բանուորների վարձը եւ նկնցեալ, եկեղեցի, արքութիւն է հայտնել, եւ եթէ ճիշտ չէ, արեօք մեր թղթակից պ. Ներսէսեան հնարել է այդ բանը, թէ անկեղծ համոզված է եղել այդ բանում: Մեղադրեալ պ. Տէր-Ներսէսեանի խնդրեով դատարանը հրաւիրել է 19 վկաներ, ի միջի այլոց, Եղիշէ վարդապետ Մուրադեանին եւ Կաղզուանի բարեկարգ Մկրտիչ քր-ի: Տէր-Պրիգորեանին: Վկայութիւն տալը օրէնքով համարվում է հասարակական պարտականութիւն, որից չը պէտք է խուսափեն պարտաճանաչ մարդիկ: Պ. Զամբօտանեանի կողմից մասնաւոր մեղադրող է հանդիսանալու երրուեալ հաւատարմատար Միկրուչից, իսկ մեղադրեալին պաշտպանելու է երրուեալ հաւատարմատար Տիգրան Թովհանիսեան:

Կովկասեան ցուցանանդէսի կոմիտեարիտը մտադրութիւն ունի երկուշաբթի, հոկտեմբերի 29-ին, նշանակել ցուցանանդէսում ծաղիկների տուն (bataille des fleurs) եւ այլարմատական զնայցը երկանու կառքերով: Այդ օրը ցուցանանդէսի մուտքը վճարը կը լինի 40 կօպէկ: Ծաղիկների տունը նորից կը յետաձգվի, եթէ եղանակը անբարեյաջող կը լինի:

Թիֆլիսի Միջածմիւրա թաղից զէպի ս. Դուրի սարի գուլար շինվելիք ֆունկիլուբորի կառուցանող բէլգիական անօնիմ ընկերութեան կողմից նշանակված է ինժեներ Բլանշ, որ եւ կատարել է ֆունկիլուբորի շինութեան նախապատրաստական հետազոտութիւնները: Իրեւօնական պ. Բլանշին հրաւիրված է այժմ Փրանսիայից եւ մի այլ ինժեներ Ներկայումս արդէն պատրաստութիւններ են տեսնվում, որան կարելի է, շուտ սկսելու ֆունկիլուբորի շինութեան աշխատանքները: Մտադրութեան պի ֆունկիլուբորի ստորին կայարանի հիմքը դնել առաջիկայ ղեկավարներ ամսին եւ ապա ձեռնամուկ լինել հողային եւ այլ կարեւոր աշխատանքների: Երթեկեկութիւնը արդէն պատրաստի ֆունկիլուբորով, հաւանականաբար, կը սկսվի առաջիկայ 1902 թ-ի գարնան վերջերին: Յայտնի է, որ ֆունկիլուբորի շինվում է Թիֆլիսի ձիարարչի անօնիմ ընկերութեան միջոցներով, որի վարչութեան խորհուրդը արդէն ջննել, հաւանութիւն է առել ֆունկիլուբորի շինութեան նախահաշիւն եւ պէտք եղած դուրսը աշխատանքներն սկսելու համար Բրիւսէլից փոխարել է Թիֆլիս:

Ժողովրդական լուսաւորութեան միւնիստրութիւնը պետական խորհրդի առաջիկայ նստաշրջանում կը ներկայացնէ մի շարք նախագծեր,

տեւից ընկնում, հարտութիւն զիդում... Թէ որ աստիճան անհիմն է այս վերջին կարծիքը, այդ մասին շատ է գրված. սակայն ինդիքը այդ չէ, այլ այն, թէ ինչու պէտք է գաւառական գործիչները Բագու տեղափոխվելով փչանան, անգործունէութեան մասնակից, ջանի որ ոչ մի վայր, որ ոչ մի ջաղաք Բագուի պէս առատ նիւթ չէ ներկայացնում գործելու համար: Եթէ Բագուի հանգամանքները նպաստաւոր չեն, եթէ խոչընդոտ թիւղ գործէ այնքան, որքան հնարաւոր է, որքան թոյլ են տալիս պայմանները. ինչու բոլորովին ոչինչ չէ անում: Իսկական գործիչը անկեղծ ինտելիգենցիա միջով կարող է անստարբեր լինել, անգործունէութեան դատարարվել, հասարակական գործերով չը հետաքրքրվի, թէ կուզ օրտեղ էլ որ գանկելու լինի: Երկն պայմաններով էլ չը շապատված լինի: Երբեք, ոչնչից նա օգտակար գործ կը օտեղդէ, ուր մնաց կինդանի մարդկերանց շրջանում, ուր ամեն մի քայլում վստում են օղիտութեան, հարտապարտութեան զոհերը, ոչ բազմակողմանի կերպով ետում է արդենաբարա-

որոնցով մտադրութիւն կայ 1902—1903 ականգէտական արվայ սկզբից բանալ զեղարուեստական, արդենաբարական եւ հանրակրթական միջնակարգ ուսումնարաններ: Ի միջի այլոց, մասնագիտական դպրոցներ կը բացվեն կովկասում, Լեհաստանում եւ Կրիմում բացառապէս թոյլ կուրծք ունեցող աշակերտների համար:

Հինգշաբթի հոկտեմբերի 25-ին, վրաց դեբասանական խումբը, մասնակցութեամբ Կ. Ղիֆիսեան, խաղաց Շէքսպիրի «Շէյլօր» դրաման: Շէյլօրի դերը կատարում էր պ. Ղիֆիսեան: Պիէտը թէ խաղի եւ թէ եկամուտի կողմից անբաւարար էր. այդ տեսակ պիէտները, շորերի եւ անսամբի բացակայութեան պատճառով, չեն տալիս սպասած տպաւորութիւնը եւ ժողովուրդը հետանում է թատրոնից անբաւական: Վերջին ժամանակները թատրոնի եկամուտը զգալի կերպով սկսեց պակասել եւ եթէ այսպէս շարունակվի՝ վրաց թատրոնը կը վերջացնի սեզօնը մեծ զէֆիցիտով:

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, շաբաթ, հոկտեմբերի 27-ին, Թիֆլիսի առաջին գիմնազիայի շինութեան մէջ տեղի կունենայ հնագիտական ընկերութեան առաջին հերթական նիստը, կոմսուհի Ուլարովայի նախագահութեամբ: Այդ նիստում կը կարգան զեկուցումներ Ա. Երեցեան, Ե. Տօկայլիլի եւ Ա. Քալանթար:

«Чера. Вѣст.» լրագրի սակով, հոկտեմբերի 14-ից սկսած Բաթում քաղաքում եւ նրա շրջը շակտներում վարակիչ հիւանդութիւններից հիւանդանալու կասկածելի դէպք տեղի չէ ունեցել:

Երկաթուղիով ճանապարհորդելու ժամանակ յաճախ է պատահում, որ ճանապարհորդը տոմսակ ունի ձեռքում, բայց նստելու տեղ չէ գտնում՝ վագօնում տեղ չը լինելու պատճառով: Գերմանական օրէնքներով այդպիսի ճանապարհորդը իրաւունք ունի ընդհատել ճանապարհորդութիւնը եւ յետ պահանջել իր փողը: Իսկ եթէ նա շարունակում է ճանապարհորդութիւնը ցրված վագօնում, գրանցում եւ արդէն զրկվում է փողը յետ պահանջելու իրաւունքից: Փրանսիական օրէնքներով աւելի լաւ է պաշտպանում ճանապարհորդների շահերը: Փրանսիայում ճանապարհորդը այդպիսի դէպքում ոչ միայն իրաւունք ունի գանգատ տալ երկաթուղու վարչութեան ղէմ, որ օտ չէ կատարում իր յանձն առած պարտաւորութիւնները, այլ մինչեւ անգամ իրաւունք ունի քրեական դատ սկսել երկաթուղիական ծառայողների դէմ, 1846 թ-ի օրէնքի համաձայն: Այդ կարգադրութեան համաձայն, բոլոր մարդատար գնացքներում պէտք է իւրաքանչիւր կարգի բաւական թիւով վագօններ լինեն, որպէս զի բոլոր ցանկացողները հնարաւորութիւն ունենան իրանց ճանապարհորդութիւնը կատարել: Իսկ 1845 թ-ի օրէնքով այդ կանօնների խախտումը պատժվում է 16-ից մինչեւ 3000 ֆրանկ տուգանքով: Եստ ցանկալի կը լինէր, ասում է «Русск. Вѣд.» լրագիրը, որ մեզ մօտ եւս պատասխանատուութեան ենթարկվեն երկաթուղիները, երբ տոմսակ ու-

կան կեսնքը: Բագուն գործիչներին, զիդեալիստներին բովն է, հնոցարանը, ուր տաքութեան հոգեկու ազդեցութեան տակ լուծվում եւ չափվում է իսկական կեղծից, մաքուր թագնված կեղծից: Այդ են ապացուցանում փաստերը: Եթէ երէկվայ գաւառական փրիսօփանները այսօր յատեղ զիդեմները լուսացնում են թուղթ խաղայով եւ կրքերի բաւականութեան համար խնդրեմք սարքելով, եթէ գաւառական գործիչ զեղումը այսօր այստեղ գողութիւն է անում, կայաքք է վերցնում, եթէ գրականագէտը ստորաքարը կերպով ողորմութիւն է ժողովում եւ ձիակերութիւն անում, գրանով մեղաւոր չէ Բագուն, Բագուն միայն արթ է ներկայացնում արտայայտելու անհատի այս կամ այն հակումը, այս կամ այն յատուկութիւնը: Եթէ անհատը չունենար իր մէջ այդ յատուկութիւնները, նրանք չէին էլ արտայայտվի: Հանրակրթական կուրսերի հիմնադիր Ա. լիբեկեան եւ նմանները թիւղ կինդանի օրիսակներ հանդիսանան ապացուցանելու համար մի անգամ էլ, թէ ինչ տեսակ էլ լինէին պայմանները, գործիչը, եթէ նա իսկական գործիչ է, գործ կը գտնէ:

Ն. Դուրեան

նեցող ճանապարհորդը տեղ չէ գտնում վազու- նով:

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են. «Մեր թատե- րաբեմերը պատրաստվում են խաղալու Վաղար- նի Ոյժն պիեսը: Հրատարակված է Քիթիլիսից դե- րասանուհի Կ. Զարեյը:

ՊԵՏԵՐՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ինչպես անդրեկացանք, մեր հայ օւսանողներն էլ պատ- րաստվում են շուտով հայկական երեկոյթ տալու: Ծանկալի էր նախկին տարիների նման որքան կարելի է ծրագրեր բազմակողմանի դարձնել զուտ հայկական կյանք պարբերով եւ նոր ժողովրդական երգերով: Այս ամառ կօն- սերվատորիայի ուսանող Ս. Դեմուրեանցի եւ Ե. Բաղդասարեանցի առած մի քանի համերգ- ների ծրագրերը կարող են կենդանի ապա- ցոյց լինել ժողովրդական երգերի աւելանա- լուն: Կարելի էր դիմել դրանց որ առաջ եւ ստանալ մի քանի բոլորովին նոր երգեր»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍԱՆԻՑ

Թարեզ, հոկտեմբերի 14-ին Մերէկ, ամսի 13-ին, Ատրպատականի նորըն- արի առաջնորդ Նիկիէ Ժարգազյան վարդապետ Մուրադեանը ժամանեց Թարեզ, իր պաշտո- նատեղին: Դիմաւորելու զուրա էր եկել բա- ւական մեծ եւ ստուար բազմութիւն, կազմ- ված մեծ մասամբ երիտասարդներից եւ հասա- վակ ժողովուրդից: Ուրախ էր ժողովուրդը, զգացված էր ինքը առաջնորդը: Զը կային Ղալայի աղաները. խեղճ աղաներ, ինչ որ նրանք իմանային, որ այսքան մեծ բազմութիւն, մա- նաւանդ Ղալա թաղի ժողովուրդը իրանց օ- րինակին չի հետեւի եւ ուրախութեամբ կը գնայ առաջնորդին դիմաւորելու, ո՛ր այն ժա- մանակ, նրանք էլ կաշխատէին այդ փառքին արժանանալ, շատ աւելի շքեղ ընդունելութիւն ցոյց տալ: Բայց աւանդ, շատ ուշ էր... Նրանք աշխատել էին այնպիսի դիրք ընել, որ իրք թէ իսկի էլ չեն հետաքրքրվում Նիկիէ վար- դապետով եւ չեն էլ ուզում ճանաչել նրան, բայց այդ չափովն ինքնուրույն:

Որ Ատրպատականի թեմը կառավարելը ծանր եւ դժուար է, այդ որոշ չափով ճիշդ է: Ծանր եւ դժուար է ոչ այն պատճառով, որ ժողովուրդը տգէտ եւ խորհրդակալ է խա- ւարի մէջ, որ ունի անթիւ ցաւեր եւ հազա- րաւոր անյետաձգելի կարիքներ, իսկ այդ բո- լորին չէ կարողանում, կամ անընդունակ է լինում առաջնորդը բաւարարութիւն տալ: Ոչ, դրանցից եւ ոչ մէկը Այլ պիտիայն թարեզի աղաների մի որոշ մասի պատճառով, որի հա- մար արտութիւն, ազնիւ ասած բաները գոյու- լին չունեն: Նա անընդունակ լինելով ազնիւ պաշար մղելու, ամեն տեսակ ցած միջոց- ներ է ձեռք առնում իր հակառակորդին դե- լու համար: Նա անձնական շատ աննշան ան- ձեռութեան եւ հակակրօնական պատճառով պատրաստ է ոչնչացնել զործեր, որ ժողովրդի համար շատ կենսական են:

Աղայի բնաւորութեան այս կողմը, ինչպէս երեւում է, գիտե՛ք եւ Նիկիէ վարդապետը: Նա, ինչպէս ճանապարհին մի խումբ մարդկանց ներկայութեամբ, նոյնպէս եւ եկեղեցում այդ բանի վրա չնշանց, յիշեց եւ այն, որ իր պաշ- տօնը ծանր եւ պատասխանատու է, եւ առաջ- նորդը, լինի նա գերբնական, արտակարգ ըն- ղունակութիւնների տէր, առանց ժողովրդի հակակրօնական օչնչել չէ կարող անել: «Մէկէլ» աւելացրեց նա, լսել եմ, որ ձեր մէջ կան թա- ղական կրօններ. պէտք է մոռանալ այդ բո- լորը, դէն, շատ հեռու պէտք է չլարել ան- ճեպը եւ ձեռք ձեռքի տալով, եղբարական բազր արթով շղթայած, առաջ ամեն մեր իս- կական գործը: Այնպէս պէտք է անել, որ եւ էլ սեւերեա չը մնա եւ ամօթահար չը հեռա- նամ ձեռքնից»:

Այսօր Ղալայի եկեղեցում կարգացվեց Վե- հափառ կաթողիկոսի կօնակը, որով Նիկիէ Ժարգազյան վարդապետին հաստատում էր առաջնորդի պաշտօնի մէջ: Բայց այդ կաթո- ղիկոսական ողջոյններից, վեհափառը յոր- դարում էր Ատրպատականի հայ ժողովրդին աջակից հանդիսանալ առաջնորդին եւ ընդհա- նուր ոյժերով վարել գործը: Նոյն կօնակը ա- ռաջկապ կրօնի կարգապահելու է Լիւաւա թա- ղի եկեղեցում:

Պատարագից յետոյ բաւական երկար խօսեց Նիկիէ վարդապետը: Ներկայ էր մեծ բազմու- թիւն, ձգացված էր խոսում առաջնորդը եւ

զգացնել է ապրի ժողովրդին. բարոյը, որ ա- ւելի ճառք բնաւորութիւն էր կրում, անցաւ շատ գեղեցիկ եւ հետաքրքիր:

Նա համառոտ կերպով ծանօթացրեց իր գոր- ծունէութեան հետ, պարզեց ժողովրդին իր գործունէութեան ծրագրեր, թէ ինչ բաներ անհրաժեշտ է համարում, ինչպէս յիշեց—լրա- գիր, կենտրոնական դպրոցի խնդիրը, կանո- նաւորել ներկայ դպրոցների աննախնայելի վիճակը եւ դրանց, որքան կարելի է, գործ- նական իողի վրա դնել, գիւղատնտեսական, ինչպէս կաթնատնտեսական, մեղուաբուծա- կան եւ այլ բաժիններ ունենալ, գործիքներ բերել տալ եւ այլն եւ այլն:

Նա չնշանց եւ այն, որ այդ բոլորը անելու համար անհրաժեշտ է եւ ժողովրդի աջակ- ցութիւնը: «Միութիւնը ոյժ է», անհ ինչ է ասում խելօք առածը. բայց նախ մենք պէտք է սկսենք մեր աղքատիկ միջոցներով եւ ա- պա իրաւունք ունենանք ուրիշների օգնու- թեան դիմել:

Առաջնորդը, ի միջի այլոյ, ասաց եւ հետե- ւեալը: «Ինչպէս երէկ էլ ասել եմ, այժմ էլ նորից կրկնում եմ. մոռանանք, դէն չլարենք անյեալը, մոռանանք այն բոլորը, որ ասել են իմ եւ ձեր մասին, եւ այժմ քանի իրար ժող ենք, աշխատենք միմեանց աւելի լաւ ճանաչ- ելու, ուրիշի լուծին չը հաւատանք: Ըս լիւայոյս եւ միանգամայն հաւատացած եմ, որ խօսքից կանցնենք գործին, ասածներս լով խօսքեր չեն մնալու, լով փշուռ ծրագիր չէ մնալու. այդ ցոյց կը տան փաստերը: Հետեւեղեք իմ ամեն մի քայլին եւ երկար ըննադատեցէ՛ք իւրա- ճանչէ՛ք գործս եւ ըստ այնմ գնահատեցէ՛ք: Քանի որ մէկ գլուխը որքան էլ լինի խելօք, չէ կարող մի քանիսի տեղը տալ, զանազան վարչական, հասարակական եւ այլ խնդիրների համար պէտք է, որ ժողովուրդը ընտրէ իր մի- ջից 7 խորհրդակիցներ իմ համար»:

Շատ համակրելի խօսքեր եւ ջանկալի գոր- ծունէութեան ծրագիր: Բայց քանի որ ցան- կութիւններ, յոյսեր եւ միմիայն խոստումներ են բոլորը, մենք առ այժմ պարտք ենք հա- մարում միայն արձանագրել, իսկ իւրաքանչիւր գործը իր ժամանակին քննարկուել:

Ե. Փրանսիական

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆԸ

—Կ. Պոլսից հեռագրում են «Россия» լրա- գրին, թէ թիւրքաց կառավարութիւնը պատե- րազմական զորք մէջ է դնում իր զորքը:

—«Frankfurter Zeitung» լրագրի Պարիզի թղթակիցը հաղորդում է, թէ Ֆրանսիական նախագահ Լուրէի ուղեւորութիւնը դէպի Ռու- սաստան վերջնականապէս նշանակված է ա- յապիկայ 1902 թ.ականի յունիս ամսին: Սիլ- ղում նախագահը մտադիր էր այցելել Ռուսաս- տան մեծ պատին, այսինքն պարսկալեւստան ընդհանուր ընտրութիւններից առաջ, բայց յետոյ փոխեց ժամանակը, որպէս զի նացիո- նալիստների առիթ չը տայ տարածելու, թէ այցելութիւնը ձեռնարկվում է իբրեւ ընտրու- ղական մանուկը: Լուրէ ափ կիցիկ Կոնյուտաղ- տում, կայցելէ ապա Պետերսբոց ու Մոսկու ու յետ կը դառնայ կամ Կոնյուտաղի կամ Լիբա- վայի վրայով:

—Փրանսիական լրագրիները հետեւեալ կար- ծիքներն են յայտնում այն ժողովրդի ցոյցի մասին, որ անում է այժմ Ֆրանսիական կա- ռավարութիւնը Միտիլէնա կղզու առաջ: «Journal des Debats» յոյս է տածում, թէ այժմ սուլթանը կը գիշանէ եւ կը կատարէ Ֆրանսիայի բոլոր պահանջները: «Temps» շատ գոյշ է խոսում կառավարութեան այդ քայլի մասին եւ մեծ հետեւանքներ չէ սպասում նը- րանից: Նացիոնալիստական լրագրիները գա- նազան կարծիքի են. նրանցից մի քանիսը, ինչպէս, օրինակ, «Patrie» լրագրը, որ սո- վորաբար հիացմամբ է խոսում այդ տեսակ ձեռնարկութիւնների մասին, այս անգամ նա- խանձելով այն աջողութեանը, որ կարող է բաժին ընկնել կառավարութեանը, նախազու- չակում է միջազգային գործութիւններ եւ յայտնում, թէ Ֆրանսիան դարձել է իրան զար- հուրելի արկածների մէջ մի քանի վաշխա- տունների պատճառով. միւսները, ինչպէս «Li- berté», «L'Humanité» եւ այլն կառավար- ութեան վարժունքին: «Liberté»-ի աշխատա- կիցը մօտ օրերուս խօսակցութիւն է ունե- ցել մի գիւղատնտէր հետ Ֆրանսիական նաւա- տորմի ծովային ցոյցի մասին. դիւրամաբ խոսողական է, որ իրաւի միջազգային բար- դութիւններ կարող են ծագել այդ ցոյցից, մա- նաւանդ, որ Ազգիական աշխատում է ինձեզի դրծերը Արեւելքում: Կարող է պատահել, ա- յելացրել է դիւրամաբ, որ արեւելեան հար- քը բարձրանայ իր գարնուրեկի ամբողջու- թեամբ: Իտալական «Tribuna» լրագրը խիստ լեզուով ըննադատում է Ֆրանսիայի վերա- բերմունքը դէպի Բ. Դուռը եւ յայտնում է, որ եթէ «Figaro»-ի հաղորդած տեղեկութիւնը ճիշդ է Միտիլէնա կղզու գրաւման մասին,

այդ դէպքում Իտալիան անտարբեր մնալ չէ կարող:

—Պուելով այն հազարն ազուկի մասին, որ եւրոպական եւ ամերիկական թերթերը բարձրացրին միտիլէնաբնակ Ստօնի յափշտակ- ման առիթով, Սօֆիայի «Вѣщания Порта» արդարացի յանդիմանութիւն է կարդում քրիս- տոնեայ Եւրոպային: «Պէտք էր սպասել, —ա- սում է այդ լրագիրը, —երկու կանանց յափշ- տակութեան անյայտ աւազակային խմբի կող- մից, որ եւրոպական մամուլը սկսեց խօսել Քրիստոնէաների անտանելի գրութեան մասին թիւրքերայում... Յափշտակված են երկու կա- նայը, մէկը—ամերիկացի, միւսը—բուլղարացի: Յափշտակութեան փաստը ինքն ըստ ինքեան վրդովեցուցիչ է եւ արժանի է դատաւար- տութեան, բայց ներկայ դէպքում կայ մի ու- ռիշ րան, որ թերեւս աւելի վրդովեցուցիչ է, քան յափշտակութիւնը: Միւսը—ամբողջ մամուլը խօսում է միայն Ստօնի եւ նրան ա- զատելու մասին, ոչ ոք ցանկութեան ոչ մի խօսք անգամ չէ արտասանում Ստօնի հետ միասին յափշտակված բուլղարացի կնոջ մա- սին: այն ինչ վերջինի գրութիւնը եթէ ոչ ա- յելի վրայ, գոնէ ամենեւին լաւ չէ Ստօնի գրութիւնից, որովհետեւ յափշտակութեան րօպէին գտնվում էր յղութեան վերջին շրջանում: Այսինքն, քրիստոնեայ ազգերի այսպիսի վերաբերմունքը դէպի իրանց հաւա- տակիցները, որոնք առաւելում են թիւրքա- կան լուծի տակ, նորութիւն չէ վերջինների համար... Թիւրքերայում աւերվում ու կոր- ծանվում են ամբողջ գիւղեր, եկեղեցիների սեղանների վրա բռնաբարվում են հարիւրա- ւոր կանայք, յափշտակվում են հազարաւոր աղջիկներ իրանց կիսամեկ մայրերի գրկից... եւ Եւրոպայի շատ լաւ տեսնում ու լսում է այս ամենը, բայց ոչ մի խօսք հարկ չէ համար- ւում արտասանել ի պաշտպանութիւն դարձ- րում անվիրոգների: Բայց արժէր միայն, որ յափշտակվէր մի միտիլէնաբնակ—եւ անա ամե- րիկական ու եւրոպական մամուլը օճիք է պատռում:

—Կ. Պոլսում հոկտեմբերի 26-ին թիւրքաց նաւատորմի օֆիցերները եւ ուսուցիչները մի խումբ ցոյց արեց ծովային միտիլէնա- թեան չինութեան առաջ, որպէս բողոք այն բանի դէմ, որ սոսիկ չեն ստանում երկար ժամանակ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

25 հոկտեմբերի

ՊԵՏԵՐՈՒՄԻՑ, Հոկտեմբերի 25-ին տեղի ունեցաւ օրպակա երեխաների ինտերուուա- օժուումը եւ բացոււր, որը առաջինն է Ռուսաս- տանում, ունի տարբ Երեմանցիների օրպակա- ներին պահելու համար. Լիճի օրստեմի 4 շերտանցները բերված են արտասահմանից, իսկ մնացած վեցը ինտերուուաի կառավարիչը բըշ- կապետ Գուրբուրի սիստեմի են, որոնք չինված են այստեղ: Ինտերուուաի կազմակերպութիւնը մօտ չորս հազար բուրեի նստեց:

ԱՄՆԱՆ, Բօթային մասնաժողովը եւ նաթ- արիւնաբերողների միջամասնութիւնը օպա- սում են երկրագործութեան միտիլէնայի վճարի նոր անօրոգներ նշանակելու վերաբերմամբ: Այստեղ չեն կարծում, որ անօրոգներ նշանակ- վին ներկայումս, որովհետեւ համարեա բոլոր Ֆիլիպինները կրճատել են հօրեր փոքրու աշ- խատանքները. ամենից հաւանականն է, որ նոր անօրոգներ նշանակելու ժամանակ խոշոր Ֆիլիպինները ցածր գնեթով կը վերցնեն հոգա- բաժինները ի պահեաւ, այնպիսի պայմաննե- րում ամբողջ նաթային գործը կորցնում է իր արժէքը: Փողի պակասութիւն այժմ շատ է զգացվում Բագուում:

ԼՈՁ, Այստեղի բոթայում հիմնվում է տե- ղական բարձրարանայէրերի միջնորդ յանձնա- ժողով գործակալի յատկութիւնը որոշելու հա- մար, լիվերպուլեան միջնորդ յանձնաժողովի նման:

ԽԱՐՎՈՒ, Այսօր, հարաւային լեռնային վար- թիւնեան պետ գաղանի խորհրդական Ի. Ի. Չէրէնցէի հնարազանութեամբ, բայցով է Ռուսաստանի հարաւի լեռնարիւնաբերողների 28-դ համաժողովը: Համաժողովին առաջարկ- ված են 14 հարցերի քննութիւն:

ԱՍՏՐԱԽԱՆ, Գիւրիները սկսվեցին վեց առ- թիւանի ստանձանագրից:

ԿՐՈՆՏՍՏԻՆ, Պետերբուրգի հիւսիսային ըն- կերութեան Վիշնայի Գորշայով գնաց Վլադի- վոստօկ: Այդ վերջին շոգնաւան է, որ Պետեր- բուրգից ուղարկվում է ներկայ նաւագնացու- թեան ժամանակ հետո Արեւելքի նաւահան- գրատները:

ԼՈՒՐՈՆ, Այստեղի լրագրիները պայցին հե- ուագիր Միւլայից հոկտեմբերի 24-ից, որ հա- ջորդում է, որ սահմանի վրա վազիրիների հետ ընդհարման ժամանակ, անցեալ երկու-

շարթի սպանված են 30 օֆիցերներ եւ սիւպա- իններ եւ 6 վիրաւորված են:

ՊԵՏԵՐՈՒՄԻՑ, Բերլինի չինական նախկին դեսպանը նշանակված է արտաքին գործերի միտիլէնա- թեան նախկին փոխ-նախագահ Գուրու-Պէնի տեղ:

Կ. ՊՈԼԻՍ, Անգլիական դեսպանատան եւ Բ. Դրան միջու համաձայնութիւն կայացաւ խոսու յանձնաժողով նշանակելու մասին վիճելի տե- ղերի սահմանները որոշելու համար Սմէնի սահմանի վրա:

ՊԱՐԻՉ, «ECHO de Paris» հաղորդում է, որ Դէլիկատէ կը տայ Բ. Դրանը որոշ ժամանակա- միջոց Ֆրանսիայի առաջադրած նոր պահանջ- ներին բաւարարութիւն տալու համար: Ժա- մանակամիջոցը լրանալուց յետոյ Կալեար կը ստանայ նոր հրամաններ եւ յամենայն դէպս կը մնայ երկար ժամանակ թիւրքաց ջրերում:

26 հոկտեմբերի

ՊԵՏԵՐՈՒՄԻՑ, Հիւսիսարեւելեան պատճառով ծառայութիւնից արձակվում է Սեմիպալատի- նեան շրջանի զինւորական նահանգապետ գե- ներալ-լէյտենանտ Կարպօվ: Վեատակայի նա- հանգապետ Կլիւքենբերգին Բարձրագոյն հրա- մայված է լինել Վլադիմիրի նահանգապետ— Նիւեանի փոխ-նահանգապետ Խամուտովին Բարձրագոյն հրամայված է լինել Վեատակայի նահանգապետի պաշտակալատար:

Ֆինլանդիայի միտիլէնայի թիւրք հնարաւոր գտաւ վերացնել իր նախկին կարգադրութիւ- նը, ներկայ տարվայ մայիսի 28-ից, այն է չը թոյլ տալ գնահատելու ռուսական բօրանե- րում առեւտրական եւ արդիւնաբերական այն ընկերութիւնները թղթերը, որոնց հիմնարկու- թիւնները կամ վարչութիւնները մէջ մասնակե- ցում են գերմանական հպատակներ:

ՆԻՇՆԻ-ՆՈՎՊՈՐՈՒ, Նահանգական դատա- րանում քննվեց մի գործ, որ սկսված էր քրէա- կան կարգով, եւ որ հաղորդեց է դրան առիթ տուող հանդամանքների պատճառով: Մեղադրում էր «Справочная Книжка»-ի հրատարակիչ Վի- նօգրադով թատրոնի անարբարները Նէլզօրի- նին զեղարուեստական սեփականութեան իրա-ւունքը խախտելու համար. այդ խախտումը երեւան էր գալիս նրանով, որ Նէլզօրին թատ- րոնական պրօգրամները մէջ դեմատում էր իր թատրոնի պարներ, որ նման էր Վիլնօգրադովի գրքոյկի մէջ աւելի առաջ տպված պլանին: Դատարանը արդարացրեց Նէլզօրինին:

ՊԱՐԻՉ, Միտիլէնայից հեռագիրը հաղոր- դում է, որ ծովապետ Կալեար գրաւեց տեղա- կան մաքսատները ոչինչ դիմադրութեան չը հանդիպելով: Պետութիւններին ուղարկվեց չըլաբերական յայտագիր, որի մէջ, պատգա- մաւորների ժողովում միտիլէնայի Դէլիկատէի առ- լած բացատրութիւններին համաձայն, արտա- յայտված են Ֆրանսիայի դիմաւորութիւնները: Պետութիւններից միտիլէնայի այժմ առացված պա- տասխաններից երեւում է, որ Ֆրանսիական յայտագիրը ամեն տեղ համակրութեամբ է ըն- դունված:

ԿԵՐՆ, «Köln. Zeit.» լրագիրը հաղորդում է, որ Բերլինի Ֆրանսիական դեսպանը այսօր ներկայացրեց բացատրութիւններ Ֆրանսիա- կան ծովային արշաւանքի վերաբերմամբ: Բա- ցատրութեան մէջ ասված է, որ «Ֆրանսիան ոչ մի դիմաւորութիւն չունի երկիրներ խել Վիլնօգրադովի պատերազմի ընդմիջմանը: Նաւատորմը Միտիլէնա ուղարկելու նպատակը միայն վճարի երաշ- խաւորութիւն ստանալն է ըստ պահանջման, որ շատ անգամ խոստացվում էր եւ ապահովել ի- րան հնարաւոր ձգձգումները դէմ թիւրքաց կողմից:

Կ. ՊՈԼԻՍ, Մերէկ երեկոյեան Բ. Դուռը ֆը- րանսիական դեսպանութեան խորհրդական Բապտիստ մի յայտագիր ուղարկեց, որի մէջ հաղորդում է, որ համաձայնութիւն է արված վերաշինելու կամ նորոգելու եկեղեցիները, վանքերը եւ ուրիշ հիմնարկութիւնները, թեւով 16, զանազան վիլայէտներում:

ՊԱՐԻՉ, Կէլայից յետոյ ծովապետ Կալեա- րից այստեղ ստացված հեռագիրը ուղարկված է Միտիլէնա կղզուց եւ հաղորդված է թիւր- քական հեռագրաթիւրով Այդ հեռագրի մէջ յի- լեղով մաքսային հիմնարկութիւնները գրաւե- լու մասին, ծովապետը հաղորդում է, որ կլան «Լիոն» եւ Վէպէ նաւերը եւ միացան նաւա- տորմին:

ԽՄԱՍԳՈՐԹԻՒՆԸ ԵՎ ՍԱՅՆՈՒՄ Է

Վ. Ա. Գ. Մ. Փ. Վերադարձինք պատով ամ- բողաւչու:

Թարագիր ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակչին՝ ՔԱՐՈՒՆԻ ՏԻՊՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիս, Վորոնցովի արձանի հանդէպ)
ԱՌԱՋՈՐ, ԲԱՅԳԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻԳ:
ԱՌԱՋՈՑՆԵՐԸ

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. Գիրարձու-
թեան, Վերնիական (Թիֆլիս) և միգրանտ. հիւանդ.
Կ. Մ. Չիլոյանի—9—10 ժ. աչքի, ներքին և
նեարդային և
Կ. Բ. Գոգիլիով—12—1 ժ. ախտաբ. թիֆ և կ-
կորի և
Զ. Բ. Քարամանեանց—11—12 ժ. կանանց և երե-
կայաց հիւանդ.

Ս. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երե-
կայաց և
ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ն. Ն. Առաքելեանց—5—6 ժ. Գիրարձու-թեան և
մարթո և
Ա. Ն. Շալալովի—6—7 ժ. նեարդային (երեկ-
արարով), վիճիկ և մարթո և
Գ. Ա. Թաթումեանց—7—1/2 ժ. ներքին և երե
կայաց և

Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.
Վճար 50 կ. էջաւորներ ձրի շամաթորդի (կոն-
տրիկ) և օպիւմիակի համար առանձին:
Ս. Յ. Ասլանեանի—ասանը, մազկանաւ և բժշ-
կան մարմնամարդ. դիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերահսուչ՝
Բժշկական ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ.

ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԹԱՏՐՈՆ

Կերակր. հոկտեմբերի 28-ին,
կը լինի երկրորդ
Յերեկվայ հանրամատչելի ժողովրդական

ԿՕՆՑԵՐՏ

Խ. Մ. ԿԱՐԱՄՈՒՐՉԱՅԻ

Մասնակցում են պ. պ. Կ. Գապեան, Ա.
Յակոբյանեան, Տ. Տէր-Առաքելեան, և ցու-
յանհանդէպ հայկական խան խումբը:
Տոմսակները 10 կ., 20 կ., 30 կ., 50 կ. և
օթեակ—1 ր. վաճառվում են նոյն օրը ժամը
9-ից թատրոնի կառնալուստ: 1—2

Ս. ՂԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

յարմարեցած նորուաների համար
Գինն է 15 կ.
Դիմել՝ Армавирь (Куб. Обл.), Регенту Сп-
меону Шаапянцъ. 1—4

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հառն Կարապետեան

Դարմանում է առանցիկ, շինում է պլուրներ,
նոկէ պատկեր արձանների վրա նստացնելու
և կեղծ աստաներ ուկէ և կառուցուկէ պատ-
տինկաների վրա:
Հնդուանում է հիւանդներ ժամը 9-ից առա-
ւտեան մինչև ժամը 7 երեկոյեան:
Սոյալակայա փողոցի վրա, առև Միքոն-
ով № 6. 8—30

Գեորգիուրդի բժշկական վարչութեան թոյլ-
աւութեամբ Մեծ արկղիկը 5 րուրի, փոք-
րը—8 ր. և 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

ժողովրդը բուժանելու և աւրաջնելու համար,
սնկացնում է թիֆլիսի Դուրս և եկել նաև
բարձրագին նոր միջոց

ՅՈՒՑԻ ԿԱՐԵ

երեան ընդունելու և օպիւմիակութեան
տալու համար, օգնչացնում է արևի պատ-
ճառած սեւութիւնը, մեւեկը, ապիս և կա-
շուին ընդունելու և օպիւմիակութեան Այգ
գնեքը չափաւոր են. մեծ որուակը, արկղի-
կի մէջ. 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ.
Մասնավոր են բոլոր պարֆիւմերական և
զերդավաճառական խանութներում: Գլխա-
ւոր պատեար գտնվում է Գեորգիուրդում,
Գուլիկեանայա փողոց Թ. № 15, քնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան զե-
ղաւան ապրանքների վաճառան ընկերու-
թեան խանութում՝ Նրեանեան հրապարակ
և նրա բաժանմունքում, Միքայելեան փո-
ղոց և Բաղուում. նաև Միքայելեան կա-
մուրջի վրա, Գապովի և Արիստակովի զե-
ղաւաններում: Օտարաբարձարների պա-
տեւանները կառարվում են անմիջապէս՝
պատուով: 88—100

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 28-ին
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը
կը ներկայացնէ
Առաջին անգամ նոր պիէս
Ե Ր Փ Ր Ն Է

Դրամա 3 արար. հեղ. Շիրվանզադէի

Վերջը

Ծերրուկը ԿԱՏԱԿՈՒՄ Է

Մասնակցում են՝ տ. Աւետեան, օր. Գուլա-
զեան, տ. ա. Չաբէլ, Մայրոսերեան, Փառան-
ձեան, պ. պ. Արէլեան, Ալիբանեան, Աւետեան,
Չարիֆեան, Մէլիք-Յովսէփեան, Պետրոսեան,
Ստեփանեան, Վրոյր:

Սկիզբն է ճիշդ ժամը 8-ին

Տեղերի գները իջեցրած են: 1—2

Այսօր, շաբաթ, հոկտեմբերի 27-ին

Արական I գիննադրայի դահլիճում
կը կայանայ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄՕՍԿՎԱՅԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՃԻՒՂԻ ՆԻՍՏԸ

Պարագմունքների առարկաներն են՝ 1) Հա-
յերի սկզբնական ծանութիւնը հիւսիս-արե-
ւելեան Ռուսաստանի հետ—Ա. Գ. Երեցեանի:
2) Բէլիւ-Կիււիչի շրջանի վրաց հնութեան ար-
ձանները—Ն. Ս. Տակաչովի: 3) Չաբարիա
Ազուլեցու օրագրութիւնը—Ա. Հ. Քայանթարի:
Նիստը հրապարակական է: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների խորհուրդը խնամարար խնդ-
րում է պ. պ. անդամներին շնոր բերել ընդ-
հանուր ժողովի նայեմբերի 2-ին, երեկոյեան
ժամը 9-ին, ժողովարանի անխաձգելի կա-
րիքների մասին խորհրդակցելու համար:
(հ. 27, ն. 2) 1—2

ԲԷԼՍՔԱՆ ԳԻՒՂՈՒՄ (Չաբաթ. շրջան)

ժախվում են ընտիր տեսակի պողատու ծառեր,
1—2 ասրեկան: Պայմանների մասին կարելի է
տեղեկանալ Խորոսովի քարվասարայում, № 62,
Մինաս Աւագեանից: 3—4

ՅՈՒՑԿԻՄ ՄԱՆՈՒԹԵԱՆՅԻ

ԲԱՂԴԱԴԻ ԾԵՐԱՄԻ ՍԵՐՄ

ՊԱՏՐԱՍԱՏՊ ՊԱՏՅԵՐԻ ՍԻՍԵՄՈՎ

Целлюлярная гrena, приготовленная посие-
тем Пастера.
Կարելի է դիմել՝ Тифлисе, Лорисъ-Мели-
ковская ул. д. № 11. Галуцы Галустанцъ.
կամ Черевъ Ордувать, село Мегры, Иоаниму
Малуянцъ. (2) 14—15

ՎՏԱԿ

ժողովածուն լոյս տեսու
և վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրա-
վաճառանոցում: Գինն է 1 ր. 50 կ., փառա-
կազմ՝ 1 ր. 90 կ., 2 ր., 2 ր. 25 կ.:
Նոյն տեղը ստացվել են և հետեւեալ նոր
գրքեր՝

ԳԻՐԻ ԹՂՈՑ. Մասնագրութիւն նախ-
նեաց, Թ. 1901 թ., գ. 1 ր. 50 կ.:

Ս. ԷՋՄԻԱՇՆԱՅ ՕՐԱՑՈՑՑ 1902 թ. գ. 20 կ.

Դրավաճառներին և գումարով գնողներին
գիջումն է լինում:
Դիմել՝ Тифлисе, въ Центральную книжную
торговлю. (2.) 5—10

ԴԱՇԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԿԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ

Համաժողովի նիստերը տեղի կունենան հոկ-
տեմբերի 25-ին, 26-ին և 27-ին, երեկոյեան
7 ժամին, Գիւղատնտեսական ընկերութեան
չինութեան մէջ: 5—3

Удостоен, награды национальной Академии Земледелия, Промышленности и Торговли въ Парижѣ.
ПИСЬМЕННОЕ ПРЕПОДАВАНИЕ ДВОЙНОЙ
БУХГАЛТЕРИИ
вполнѣ замѣняющее устное преподавание. Условія
и пробныя письма высшимаго безплатно.
Плата умѣренная. Преподаватель бухгалтеріи
А. Н. ЯНКОВСКІЙ, въ Ригѣ.

Հ Ր Ա Ւ Է Ր

Ամսի 28-ին, կիրակի, առաւտուան ժամը
11-ին, Չուղորդէթի Թ. Աստուածածնի եկեղե-
ցում ժողով է լինելու, մի երկու բացառու-
թիւններ ստուգելու, ուստի արանով յարգոյ
ձիւնը հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ ե-
կեղեցում՝ ժողովին մասնակցելու համար:
Գործակալ Թ. մասի Թիֆլիսի՝
Գրիգոր Թ. Մանգակունի

ԲԺԻՇԿ ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՍԱԸ

Յանձնված է Թիֆլիսում Կենտրոնական գրավաճառանոցին,

ուր հրաւիրվում են գիմել ցանկացողները
Ն Ո Ր Ե Ր Ս Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ն

«Մարմնամարզութիւն» (25 պատկերով)—գինն է 20 կօպ., «Մարմնամարզութեան աղիւսակ-
պատկերներ»—գ. 10 կ., «Ժառանգականութիւն և դատարարութիւն»—գ. 15 կ. և «Ման-
կավարժական համառոտ դրոյշներ»—գ. 15 կ. նաև միւս աշխատութիւնները.—Առողջ հոգին
առողջ մարմնի մէջ»—գ. 10 կ., «Գեղձախտ—գոյտուխտ»—գ. 10 կ., «Ո՞վ է յանցաւորը»—գ.
15 կ., «Միֆլիս»—10 կօպ., «ՄԻՐ նեարդերը»—10 կ. և «Ընկերական տխրեր»—գ. 5 կօպ.:
Դրավաճառներին և գումարով գնողներին գիջումն է լինում:
Դիմել՝ Въ Тифлисе. Въ Центральную книжную торговлю. 4—10

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ

„ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆ“

Ընկերութեան փայրի ստորագրութիւնը (զեղատան, հանքային ջրերի գործարան և
այլն) և 10% ի առաջին վճարը (հինգ րուբլի) ընդունվում են Թիֆլիսի Առեւտրական Նախ-
արդիւնաբերական Ընկերութեան գրասենեակում—Երեւանեան հրապարակ, առև Խարազեա-
նի, գաւթում, ժամը 10-ից մինչև 2 1/2-ը, նոյնպէս և պրովիզօր Սահակեանի և ընկ. ղեղա-
վաճառական պահեստում, Վորոնցովի արձանի մօտ: 1—3

ՀԱՇԻՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹՅՔԻ ՎԻՉՐՁԱՆ

Խ Ե Չ Ե Տ Ո Ւ Ր Ծ Ի Ր Ե Ջ Ե Ե Ն Ի

Ուսուցանում և պատրաստում է 4 ամսվայ ընթացքում:
Պարագմունքի առարկաներն են.—1) Կրկնախտակական հաշուապահութիւն: 2) Առեւտրա-
կան թւարանութիւն: 3) Թւարանութիւն համընթի վրա: 4) Բանկային հաշուապահութիւն
ըստ ամենայն ճիւղերի: 5) Առեւտրական նամակագրութիւն:
Պարագմունքները սկսվում են 10-ին սեպտեմբերի, 1901 թ.ի. Կարելի է տեսնել ժամը
4-ից մինչև 8-ը երեկոյեան: Հասցէն. անկիւն Էլզարի հրապարակի և Ալիմովսկի փողոցի,
տ. իշի. Շերվաչիձէ № 14: (2. 4.) 8—9

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՂԻ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՅ

Թիֆլիսի բաժանմունք Բաղուում: Պարագպետ:
Պատի ունենը յայտնելու, որ մեր խանութում վաճառվում են ամեն տեսակ պատրաստի
սպիտակեղէն կանանց և տղամարդկանց, ֆուֆայկաներ, չուլիկներ, նակիկներ, ձեռնոցնէ,
միտաւի կիւնկաներ սեղանի համար: Նոյնպէս բաւթաներ, զայթաններ սեփական գործարա-
նում պատրաստված, կանանց զլիք սարքեր, այսինքն չիբրիաներ, հայիաներ, մետաքէ աղ-
լուխներ և այլն:
ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ ԵՒ ԱՌԱՆՅ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ 9—10



Լոյս տեսան և վաճառվում են

Կ Ա Ր Ա Պ Ե Տ Ա Փ Ի Ն Ե Ա Ն Ի

1902 թ.

ՊԱՏԻ և ԾՈՑԻ (Շիրակ)

Օ Ր Ա Ց Ո Ց Ց Ն Ե Ր Ը

Մոցի օրացոյցը գործարված է Գ. եպ. Սրուանձեանի,
Գամառ-Քաթիկայի, Գ. Արծրունու և Գ. Ջանչեանի պատկերնե-
րով: Ունի բոլորովին նոր հետաքրքրական յաւելուած ամենաօգտա-
կար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երազան
և նոր, գուարճալի վիճակահան:
Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ և ընտիր
մտքեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, բոլոր-
ովին նոր, ծիծաղալարծ տակիներ (մեծ մասամբ անտիպ), այլ և
ժողովրդական առանձն, ժողովրդական երգեր, գիւղական լէլէներ,
ընտիր բանաստեղծութիւններ, գուարճալի հանկուկներ, շուտասե-
լուկներ, բժշկական, արհեստագիտական և այլ օգտակար և հետա-
քրքիր տեղեկութիւններ: Տախտակը շքեղ և ճաշակով պատրաստված է յայտնի լիտօգրաֆի-
լում 15 գոյնով: Ծանկացողները մասնամասն բովանդակութիւնը տպագրված առանձին թեր-
թով կարող են ստանալ 3 թր:
Գները ամեն տեղ ծոցինը—20 կ., պատիւը—50 կ., գումարով գնողներին լինում է զի-
ջում: Դիմել՝ Александрополь. Карапету «Апипияцъ կամ Alexandropole, Karapet Apinian
(Caucase): Ծանկացողները թող չապան, որ իր ձեռնարկին կարողանանք պատուէրները
էլչութեամբ կատարել: (Կ. 2.) 2—16



Կ օ ն Ֆ է տ ի ե ռ Շ օ կ օ շ ա դ ի

գ ո թ ծ ա թ ա ն

„Փ. Ն. ՓՐԻՂՈՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրդե-
ղէնից, մօնալանտէ, մարմէլաղ, պաստիլա,
զէֆիր և այլն:
Պատուէրներով դիմել գործարան. Պալ-
լովկայա փողոց, սեփական տուն, տէլե-
ֆօն № 362.

Սեփական գործարանական խանութը
գտնվում է Մէլյանում, եղը. Հէջուբեանների
տանը, տէլեֆօն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր
կոյունիական խանութներում:

Բազուի և Բազուի զաւառի համար
ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Մի-
քայելեան փող., տ. Աշուկեանի:

7—100